COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Ստրասբուրգ, 2011 թվականի ապրիլի 20

Հանրամատչելի

GVT/COM/III(2011)003

ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ՓՈՔՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՐՑԵՐՈՎ ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԵՐՐՈՐԴ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

(ստացված 2011 թվականի ապրիլի 20–ին)

Հայաստանի Հանրապետության Կառավարության մեկնաբանությունները Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կոմիտեի երրորդ եզրակացության վերաբերյալ

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը սիրով ներկայացնում է մեկնաբանություններ Ազգային փոքրամասնությունների պաշտպանության մասին շրջանակային կոնվենցիայի հարցերով խորհրդատվական կոմիտեի՝ Հայաստանի Հանրապետության վերաբերյալ 3–րդ եզրակացության վերաբերյալ (ընդունված 2010 թվականի հոկտեմբերի 14–ին):

Էջ 1՝ Ամփոփ նկարագիր

Էջ 6՝ պարբերություններ 17, 18, էջ 9՝ պարբերություններ 40,41, էջ 10՝ պարբերություններ 43, 44, 45, էջ 12՝ պարբերություններ 59, 60, 61, էջ 22՝ պարբերություն 130;

Կցանկանայինք ներկայացնել հետեյալ տեղեկությունները 2011 թվականին ծրագրված մարդահամարի անցկացման ընթացքում առաջարկվող հարցաշարում տեղ գտած ազգության, էթնիկ պատկանելության եւ լեզվի մասին հարցերին պատասխանների վերաբերյալ:

Կոմիտեի անդամների ու Ազգային վիճակագրական ծառայության ներկայացուցիչների հանդիպման ընթացքում 2010 թվականին ծրագրված մարդահամարի փորձնական ծրագիրը գտնվում էր մշակման փուլում: Ուստի, հնարավոր էր հարցաշարում ընդգրկել ազգային որեւէ փոքրամասնությանը եւ տվյալ փոքրամասնության լեզվին անձի նույնականացման վերաբերյալ Կոմիտեի անդամների դիտարկումները: Հաշվի առնելով Կոմիտեի անդամների կողմից արված առաջարկությունները՝ կատարվել են հետեյալ փոփոխությունները (բացառությամբ Հայաստանում առկա 13 ազգությունների (էթնիկ) խմբերի առումով). «հրաժարվում է պատասխանել» տարբերակը նույնպես ընդգրկված է հնարավոր պատասխանների ցուցակում այն անձանց համար, որոնք չեն ցանկանում պատասխանել էթնիկ պատկանելության վերաբերյալ հարցերին:

Անհրաժեշտ է նշել նաեւ, որ 2010 թվականին ծրագրված մարդահամարը ու բնակարանային պայմանների հաշվառումը, Միավորված ազգերի կազմակերպության Եվրոպայի տնտեսական հարցերով հանձնաժողովի եւ Եվրոպական համայնքների առաջարկությունների վիճակագրական գրասենյակի կողմից արված դրույթները, որոշակի վերապահումներով, ընդունելի են Հայաստանի Հանրապետության համար:

Բացի այդ՝ պետք է նշել նաեւ, որ մարդահամարի նախորդ՝ 2001 թվականի ծրագրի անցկացման ընթացքում հակասական հարցեր առաջացան, որոնք մշակման փուլում լուծում ստացան թվային գաղտնաբառի տեսքով: Մարդահամարի արդյունքների հաշվարկից հետո հաստատվեց, որ ազգությամբ հայերը կազմում են 97.7%, իսկ ազգային փոքրամասնությունները՝ 2.1%: Վեց հիմնական փոքրամասնությունների վերաբերյալ տեղեկություններից բացի՝ անհնար էր հրապարակել ավելի մանրամասն տվյալներ դրանց քիչ լինելու պատճառով եւ հաշվի առնելով անհատական տվյալների պաշտպանության անհրաժեշտությունը (տես՛ նաեւ ՄԱԿ–ի Վիճակագրական հանձնաժողովի, Բնակավայրերի վիճակագրական ստանդարտների հարցերով Եվրոպայի կոմիտեի Տնտեսական հանձնաժողովի առաջարկությունները, ինչպես նաեւ ԵՏՀ տարածքում 2000 թվականին անցկացված մարդահամարի ու բնակարանային պայմանների հաշվառման վերաբերյալ թիվ 49 առաջարկությունների ուսումնասիրությունները):

2011 թվականին ծրագրված մարդահամարի անցկացման համար նախատեսված ֆինանսական միջոցների սակավության պատճառով որոշում ընդունվեց էթնիկ պատկանելության եւ լեզվի մասին հարցերը չընդգրկել բանավոր հարցերի ցուցակում եւ կրճատել թվային գաղտնաբառ պահանջող հարցերը:

Ազգային վիճակագրական գրասենյակը, հաշվի առնելով Կոմիտեի եւ համապատասխան միջազգային գործընկերների կողմից արված առաջարկությունները, ընդունեց փորձնական հարցաշարը, եւ այն հրապարակվեց Ազգային վիճակագրական ծառայության կայքէջում (տես՛ www.armstat.am/am/?nid=342):

Մասնավորապես զբաղվածության ոլորտում տարիքի, սեռի եւ տարածքային տեղաբաշխման հիման վրա առանձնացված վիճակագրության դեպքում հարկավոր է հաշվի առնել այն հանգամանքը, որ հարցաշարում նման հարցերի ընդգրկումը տնտեսվարող սուբյեկտներին կպարտավորեցնի աշխատողների մարդահամարն անցկացնել նաեւ ըստ ազգային պատկանելության, որը բավականին բարդ գործընթաց է, քանի որ նման տեղեկությունների սկզբնաղբյուրը զբաղվածության ռեեստրն է, որում ընդգրկված

տվյալները տեխնիկապես կարող են նույնականացվել վարչական ռեեստրում ընդգրկված բնակչության ազգային պատկանելության կառուցվածքի վերաբերյալ տեղեկությունների հետ (ներկա պահին նման ռեեստր չկա):

Առաջարկություններ օրենսդրական փոփոխությունների եւ տվյալների հավաքագրման վերաբերյալ

Ամփոփ նկարագիր, էջ 6՝ պարբերություն 15,էջ 11՝ պարբերություններ 53, 54, 56, 132:

Ինչ վերաբերում է խտրականությունը բացառող իրավական ակտերին, հարկ ենք համարում նշել, որ այդ հարցը համապարփակ ձեւով կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, քանի որ խտրականության ցանկացած դրսեւորում՝ հիմնված սեռի, ռասայի, մաշկի գույնի, էթնիկ կամ սոցիալական ծագման, գենետիկական հատկանիշների, լեզվի, կրոնի կամ հավատքի, քաղաքական կամ այլ հայացքների, ազգային փոքրամասնությանը պատկանելության, գույքային դրության, ծնունդի, հաշմանդամության, տարիքի կամ անձնական կամ սոցիալական հանգամանքների վրա, արգելվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ եւ քրեականացվում՝ ՀՀ քրեական օրենսգրքով, ինչպես նաեւ արգելվում՝ ՀՀ քաղաքացիական եւ աշխատանքային օրենսգրքերով: Կառավարությունը կարող է համապատասխան փոփոխություններ կատարել միայն այն դեպքում, երբ հայտնաբերվեն բացեր կամ առաջանան որոշ խնդիրներ գործող օրենսդրության տվյալ մասի կիրարկման ընթացքում:

Խտրականության դրսեւորումների վերաբերյալ վիճակագրական տվյալների բացակայության պարագայում հարկ է նշել, որ խնդիրը ոչ թե վիճակագրական տվյալների, այլ նման հանցագործությունների բացակայության մեջ է, որի պատճառով անհնար է որեւէ թիվ գրանցել: Երկրում տեղի ունեցող բոլոր հանցավոր գործողությունները գրանցվում եւ համապատասխանաբար դասակարգվում են՝ ընդգրկելով հանցանքի տեսակը եւ ներգրավված անձանց էթնիկ ծագումը:

Առաջարկություններ համայնքների ընդլայնման, տեղագրական նշագրումների վերաբերյալ

Ամփոփ նկարագիր, էջ 17՝ պարբերություն 93, էջ 18՝ պարբերություն 99, էջ 20՝ պարբերություն 110, էջ 21՝ պարբերություն 118, 119, էջ 22՝ պարբերություն 131, 133:

Հայաստանի Հանրապետության տարածքում կան խառը բնակչությամբ բնակեցված գյուղեր: Ազգային փոքրամասնությունների մի շարք ներկայացուցիչներ ընդգրկված են տեղական ինքնակառավարման մարմիններում եւ զբաղեցնում են համայնքների ղեկավարների պաշտոններ:

«Համայնքների ընդլայնման մասին» հայեցակարգը կմշակվի ՀՀ Սահմանադրության եւ «Տարածքային կառավարման մասին» ՀՀ օրենքի հիման վրա: Հայաստանի Հանրապետությունում հին համակարգից նոր՝ ժողովրդավարական համակարգին անցումը ենթադրում է բարդ կառուցվածքային բարեփոխումների իրականացում, որտեղ առաջնահերթությունը տրվում է, ընդհանուր առմամբ, պետական կառավարման համակարգի եւ, մասնավորապես, տարածքային կառավարման համակարգի բարեփոխմանը: Հաշվի առնելով այս ամենը՝ մշակվեց «Համայնքների ընդլայնման եւ միջհամայնքային միավորումների ձեւավորման մասին» հայեցակարգը: Այս հայեցակարգը հաշվի է առնվում նոր ձեւավորված համայնքների ռեզիդենտների համատեղելիությունը: Հայեցակարգով չեն նախատեսվում այնպիսի սկզբունքներ, որոնք կփոխեն ազգային փոքրամասնությունների կողմից բնակեցված տարածքների կառուցվածքը կամ կսահմանափակեն Կոնվենցիայի սկզբունքներից բխող իրավունքներն ու ազատությունները: Հաշվի առնելով ասորի եւ եզդի ազգային փոքրամասնություններին պատկանող անձանց՝ տեղական գործերին միջամտելու հնարավորության նվազեցման խնդիրը՝ ցանկանում ենք տեղեկացնել, որ Արարատի մարզի ասորական համայնքում եւ հիմնականում ազգային այլ փոքրամասնություններով բնակեցված այլ համայնքներում համայնքների ընդլայնման ծրագիրը չի իրականացվում: Ավելին, հիմնականում ազգային փոքրամասնություններով բնակեցված տարածաշրջանների կառավարման, ինչպես նաեւ տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներին է վերապահվել ազգային փոքրամասնություններին առնչվող աշխատանքների համակարգման համար պատասխանատու մարմնի նշանակումը:

Հայաստանի Հանրապետության աշխարհագրական տարածքներում տեղագրական նշագրումները սահմանվեցին «Ճանապարհային երթեւեկության անվտանգության ապահովման մասին» օրենքի եւ «Լուսացույցներին, ճանապարհային նշաններին ներկայացվող պահանջների, դրանց կիրառման ու տեղակայման կանոնների մասին» Կառավարության որոշման համաձայն:

Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանության 2004-2015 թվականների ազգային ծրագրի համաձայն՝ նախադպրոցական կրթության զարգացումը Կառավարության գերակա խնդիրներից է: Կառավարությունն արդեն հաստատել է Նախադպրոցական կրթության համակարգի բարեփոխման 2008–2015 թվականների ռազմավարական ծրագիրը: Փաստաթղթում շեշտը դրվում է հիմնականում ազգային փոքրամասնությունների կողմից բնակեցված տարածքներում մանկապարտեզների ընդլայնման խնդրի վրա:

Մեկնաբանություններ 7–րդ էջի 22–րդ, 23–րդ պարբերությունների, 20–րդ էջի 116–րդ պարբերության, 8–րդ էջի 30–րդ պարբերության, 13–րդ էջի 65–րդ պարբերության, 14–րդ էջի 70–րդ, 71–րդ պարբերությունների, 16–րդ էջի 87–րդ պարբերության, 15–րդ էջի 80–րդ, 85–րդ պարբերությունների, 20–րդ էջի 115–րդ պարբերության, 23–րդ էջի 134–րդ, 135–րդ պարբերությունների վերաբերյալ

Պարբերություն 23, պարբերություն 134՝ «Հեռուստատեսության եւ ռադիոյի մասին» օրենքի՝ 2008 թվականին ընդունված փոփոխություններով սահմանվեց փոքրամասնությունների լեզուներով հանրային ռադիոյով եւ հեռուստատեսությամբ հեռարձակման եթերաժամ: Ազգային փոքրամասնությունների լեզուներով ծրագրերի տեւողությունը սահմանվեց՝ հաշվի առնելով լսարանի թիվը:

Պարբերություն 30, պարբերություն 1 16՝ Դրամաշնորհների հատկացման կարգը չի մշակվել Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից, այլ համաձայնեցվել է ազգային փոքրամասնությունների բոլոր ներկայացուցիչների հետ Հայաստանում բնակվող բոլոր ազգային փոքրամասնությունների նկատմամբ հավասար վերաբերմունքի սկզբունքի վրա հիմնված Ազգային փոքրամասնությունների գործունեությունը համակարգող խորհրդի միջոցով: Այս կարգում կատարվող ցանկացած փոփոխություն պետք է ներկայացվի եւ համաձայնեցվի ազգային փոքրամասնությունների կողմից: Ազգային

փոքրամասնությունները դեռեւս որեւէ հետաքրքրություն չեն ցուցաբերել իրենց կողմից համաձայնեցված կարգում որեւէ փոփոխություն կատարելու առումով: Հայաստանի Հանրապետության Կառավարությունն այս հարցում առաջնորդվում է Համակարգող խորհրդի որոշումներով, որին աջակցում են բոլոր ազգային փոքրամասնությունները:

Պարբերություն 65՝ Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից հատկացվող դրամաշնորհը կազմում է 10 մլն դրամ, որից, Ազգային փոքրամասնությունների գործունեությունը համակարգող խորհրդի որոշման համաձայն, 1 մլն դրամը հատկացվում է ազգային փոքրամասնություն ներկայացնող համայնքների կողմից իրականացվող համատեղ գործողությունների համար:

Պարբերություն 70՝ Կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության աշխատակիցները պարբերաբար այցելում են եզդիների համայնք, հանդիպում համայնքի անդամների՝ մտավորականների, ուսանողների, գյուղի բնակիչների հետ: Անհանդուրժողական վերաբերմունքի կամ բացասական կարծրատիպերի բողոք երբեւէ չի գրանցվել:

Պարբերություններ 22, 71, 133՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր ճարտարապետական, մշակութային եւ կրոնական հուշարձանները գտնվում են Կառավարության պաշտպանության ներքո: Հայաստանի Հանրապետության իշխանությունները, Հայ առաքելական եկեղեցին եւ հասարակության այլ շերտերը խստորեն դատապարտում են Հոլոքոստի հուշարձանի դեմ կատարված ոտնձգությունը: Միեւնույն ժամանակ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 226–րդ հոդվածի 1–ին մասի համաձայն հետաքննություն է սկսվել եւ քրեական գործ է հարուցվել:

Հաշվի առնելով լրատվամիջոցների անկախության հարցը՝ Կառավարությունը չի կարող միջամտել լրատվամիջոցների աշխատանքին, սակայն եթե հայտնի են դեպքեր, երբ որեւէ մասնավոր օրաթերթ կամ հեռուստաալիք ռասիստական կամ հակահրեական հայտարարություններ է արել (ինչը չափազանց հազվադեպ է պատահում) խախտված իրավունքների պաշտպանության լավագույն տարբերակը դատարան դիմելն է: Ինչ վերաբերում է «ԱԼՄ» մասնավոր հեռուստաընկերությանը, պետք է նշել, որ Հեռուստատեսության եւ ռադիոյի ազգային հանձնաժողովի կողմից հայտարարված մրցույթում պարտվելուց հետո այս հեռուստաընկերությունը չկարողացավ երկարացնել հեռարձակման լիցենզիան:

Պարբերություն 80՝ Ասորական համայնքի ներկայացուցիչների կողմից ներկայացված՝ մասնավոր ռադիոկայան հիմնելու նախագիծը չի ամփոփվել, որովհետեւ իշխանություններին այդ մասին տեղեկացնելուց հետո համայնքի անդամները մինչ օրս փաստացիորեն չեն ներկայացրել տվյալ նախագիծը:

Պարբերություն 85՝ Ինչպես արդեն նշվել է 70–րդ պարբերության վերաբերյալ արված մեկնաբանություններում, Կառավարության աշխատակազմի Ազգային փոքրամասնությունների եւ կրոնի հարցերի վարչության աշխատակիցները պարբերաբար հանդիպում են ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների հետ, որոնց խոսքերով հասարակական վայրերում կամ առօրյա կյանքում մայրենի լեզվով խոսելը դեռ ոչ մի խնդիր չի առաջացրել:

Պարբերություն 87, պարբերություն 135՝ Ինքնությունը հաստատող փաստաթղթերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին տրամադրվում են ՀՀ Սահմանադրության եւ համապատասխան օրենսդրության համաձայն, այդ թվում՝ «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի եւ «Լեզվի մասին» ՀՀ օրենքի համաձայն: *«Լեզվի մասին» ՀՀ օրենքի 1–ին հոդվածով սահմանվում է. «Հայաստանի Հանրապետության պետական լեզուն հայերենն է, որը սպասարկում է հանրապետության կյանքի բոլոր ոլորտները: Հայաստանի Հանրապետության պաշտոնական լեզուն գրական հայերենն է: Հայաստանի Հանրապետությունը նպաստում է հայերենի ուղղագրության միասնականացմանը: Հայաստանի Հանրապետությունն իր տարածքում երաշխավորում է ազգային փոքրամասնությունների լեզուների ազատ գործածությունը»:*

Պարբերություն 115՝ Հանրային խորհրդի աշխատանքին ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների մասնակցության մասին դիտողությունը ճիշտ չէ, քանի որ նրանք ոչ միայն մասնակցում են Խորհրդի աշխատանքին, այլեւ Հանրային խորհրդի տասը կոմիտեներից մեկը ազգային փոքրամասնությունների հարցերով կոմիտեն է եւ այդ Կոմիտեի անդամներից շատերը ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ են:

Մեկնաբանություններ 120–րդ, 121–րդ, 122–րդ պարբերությունների վերաբերյալ՝ Անդրսահմանային համագործակցություն

Հայաստանի Հանրապետության Կառավարության գերակա խնդիրներից է երկու հարեւան երկրների՝ Ադրբեջանի եւ Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորումը: Ինչպես նախկինում, այնպես էլ այժմ Հայաստանի Հանրապետությունը, պահպանելով միջազգայնորեն ճանաչված չափանիշները, համաձայնեցված քաղաքական լուծում է փնտրում Լեռնային Ղարաբաղի խնդրին, ինչն ապացուցվում է ԵԱՀԿ Մինսկի խմբի շրջանակներում անցկացվող խաղաղարար գործընթացում Հայաստանի Հանրապետության ակտիվ մասնակցությամբ: Այդուհանդերձ, նման բանակցվող համաձայնության հասնելու համար միայն Հայաստանի Հանրապետության բարի կամքը բավարար չէ: Դրա համար պահանջվում է նաեւ Ադրբեջանի Հանրապետության մասնակցությունը: Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի վերաբերյալ քաղաքական համաձայնության ձեռք բերման պարագայում կկարգավորվեն նաեւ Հայաստան Ադրբեջան հարաբերությունները: Հարկ է նշել, որ Հայաստանի Հանրապետության իշխանությունները մեծ հույսեր ունեն, որ շուտով արդար ու երկարատեւ լուծում կտրվի վերոհիշյալ խնդրին: Թուրքիային չհաջողվեց պաշտոնական դիվանագիտական հարաբերություններ հաստատել Հայաստանի Հանրապետության հետ. Լեռնային Ղարաբաղի հարցում իր դաշնակից Ադրբեջանին աջակցելու նպատակով՝ այն փակեց իր սահմանը Հայաստանի հետ: Դա արվեց չնայած Հայաստանի Հանրապետության իշխանությունների՝ առանց նախապայմանների դիվանագիտական հարաբերություններ հաստատելու առաջարկին: Հայաստանի Հանրապետության իշխանությունները շարունակում են հուսալ, որ ապօրինի շրջափակումը վերացնելուց եւ Եվրոպայում վերջին փակ սահմանը բացելուց հետո, Թուրքիան կբացի նաեւ հարաբերությունների կարգավորման դուռը: